

ԱՐԵՎԱԼՈՅԱՆ Գ.

ԾԻՄԿԱՆ ԴՊՐՈՑԻ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆ

Վաղեիլ 1 գործողութեամբ 2 պատկերով

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԻՆ ՅԵԿԱ. ԶԵՐԱԲԵՐԵՆԻ

Ո Թ Ի Փ Լ Ա

Եկարք ապօռան և Պ Օ Խ Ա Յ, Մուզեյնի Ն 8.

1913

891.99

Ա - 92

w 344

250-VR

ԱՐԵՎԱԼՈՅԱՆ Գ. - կյ

"at your service." Your service greatly appreciated.

~~83~~ 891.99
~~72.48~~ 4-92-

ԾԱՄԿԱՆ ԴՊՐՈՑԻ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆ

10 Կողմիկ 1 գործողութեամբ 2 պատկերով

ՀՐԱՏՎԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ. ԶԵՅՈՒ. ԶԵՅԹՈՒՆՆԵՐՆԻ

1001
1055



© 1998 by University

Ելեբոր. տպարան «ԵՊՕ» Խ Ա.», Մուգեյսկի № 8.

1913

26.02.2013
000000000000000000000000

22270

ՎՐԱ ՀԱՅՈՒԹ

00
22-02-9

ՀԱՅՈՒԹ ՀԱՅՈՒԹ
ՀԱՅՈՒԹ ՀԱՅՈՒԹ

Настоящая пьеса подъ заглавием „Попечитель приходской школы“ соч. А. Григоряна разрѣшена Намѣстникомъ Его Императорскаго Величества на Кавказѣ для представленія на сценахъ края (отъзвѣ канцелярии за № 3226 1913 г.) Тифлисъ.



ԽԱՅՈՒԹ ՀԱՅՈՒԹ

ԽԱՅՈՒԹ ՀԱՅՈՒԹ
ՏԻՖԼԻՍ 1913 ՀԱՅՈՒԹ

2161

ՄԻ ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Սոյն վոդկիլ երբ առաջին անգամ խաղացւեց Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան դահլիճում, մի քանիսը յայտնեցին այն կարծիքը թէ՝ լաւ կը լինէր եթէ գրւածքը լինէր բուն տփխիսեցու բարբառով:

Մենք միանգամայն կը համաձանւէինք այդ կարծիքին, եթէ ապրէինք XIX րդ դարի սկզբներին կամ նրա կիսին, որտեղ իսկապէս տփխում և նրա գաւառում (վրացախօս հայերը) ապրող հայը ունիր իր առանձնայատուկ բարբառը, և որ ամենայն հարազատութեամբ դեռ աւելի շուտ արտայայտել են Սայաթ-Նովանը իր գեղեցիկ աշուղական երգերով և Գ. Սունդուկեանը իր անմահ կօմեդիաներով:

Տփխիսի բուն բարբառը խառնւելով զանազան գաւառաբանութեան և նոր գրականական լեզվի հետ, ստեղծւել է մի նոր խառը բարբառ, որը չը կարելի ոչ տփխիսեցու սեփականութեան համարել և ոչ էլ մի որևէ գաւառի: Ներկայումս Տփխիսում և նրա վրացախօս գաւառներում՝ յածը, մասսամբ և միջին դասակարգը խօսում է հէնց այդ նոր խառը բարբառով:

Նիւթը աւելի մատչելի դարձնելու համար և որպէս առաջին փորձ մենք աշխատել ենք մեր վոդկիլ հերոսներին հէնց այդ նոր բարբառով խօսեցնել. թէ որքան մեզ յաջողւել է, դա ցոյց կըտայ ապագայ քննադատութիւնը որ մենք պատրաստ ենք իսկ գլխարաց լսելու:

Ա. Գ.

ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆ*)

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՄԻԱԿԻ ԿՈՒՊԵՑՈՎ, ՀԱՐՈՒՏ ՎԱՃԱՌԱԿԱՅ:

ՄԱՐԹՈՆ. ՄՐԱ. ԿԻՆԵ

Ա.ԲԵԼԱՆ. ՀՈԳԻԱ.ԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԱՆԴԻԱՄ:

Digitized by srujanika@gmail.com

ՊՈՎՈՍ ԴՊՐՈՑԻ ԾԱՌԱՆ:

ՊԵՏՐՈՍ ԱՆԴՐԵԱՆԻ ՏԱՐ ԽԱՌԱԿ

ՀՐԱԴՐՈՎՆԱՀԱՌ

Բեմը ներկայացնում է հարուստ սենեակ, երկու փափուկ դիւաններ մէկ միւսի դիմաց շրբած, ձախ կողմում դրւած է մի սեղան. Աջ կողմի պատուհանը դէպի փողոցն է նայում:

ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

S U R Y L 1

(Մարթան կարգի է սերում սեղանը, ներս է մտնում
Միխել Կուպեցովը ուրախ, լրագիրը ձեռքին:
Միխել.—Պահ, պահ, Մարթա ջան, ես քու հո-

^{*)} Առաջին անգամ խաղացրել է Տփխիսում, Կովկասյաց թարեգործության մասին դատարկության ժամանակաշրջանում 1913 թ.

գուն մատաղ, աես ինչ է զրած էս գագէթումը, վախենում եմ ուրախութիւնից խելքդ գլխիցդ թոցնես:

Մարթա.—Քա, էտ ինչ բան է որ էտքան ուրախացնում է քեզ, մէ կարդա տեսնենք:

Միխէիլ.—Ախմախ ոչ թէ մենակ ինձ, որ իմանաս (շնչտելով) թէ ինչ է զրած, դուն էլ կուրախանաս դուն էլ:

Մարթա.—Քա մի կարդա **Միխէիլ** ջան:

Միխէիլ.—Ես սահաթիս գէնացւա, էս սահաթիս Դու խոմ գիտես ո՞ւ մեր քաղը ժամի ու շկուի համար երեցփոխ—հոգաբարձու են ուղում բնութել:

Մարթա.—Էտ իմացել եմ քա, դու մի առա գագէթըն ինչ է ասում, չըլի զրա համար ագրում:

Միխէիլ.—Բրաւօ, բրաւօ, դրուտ որ աղա **Միխէիլի** խարջ կնիկ ես ես ու իմ հոգին, ձեռաց իմացար բանը ինչումն է, խելօք ես խելօք:

Հա, էն էի ասում, որ ուզում են երեցփոխ—հոգաբարձու ընտրել, ու ես էլ գէսից գէնից իմացայ որ ինձ են ուզում ընտրել: Այ կնիկ, հասկանում ես ինձ, էն դուր որ ասում են **Միխէիլ** աղան խելօք ու հալալ մարդ է, հասկանում ես հալալ մարդ:

Մարթա.—(Հպարտանալով) Սաղ աշխարհը գիտում ա քո հալալութիւնը: **Միխէիլ** ջան, դէն մի կարդա գագէթինը, մէ իմանամ ինչ է զրւած էտ օրհնածում:

Միխէիլ.—Մուլափ, էստի զոր ինչ զրածա զրած, ասէ Պիղատոս, էլ չի ջնջւի պլծաւ, համա վախենում եմ ինչ որ ասելու եմ էն զլխից ջնջւի: Հա, էն օրը գուքնումս խօսք ընկաւ երեցփոխ հոգաբարձու ընտրելու մասին: Ինձ ասին եթէ քեզ պլծա ընտրենք: Ես էլ նազ ու տաղ արի ոնց որ հիմիկւայ մօդէն է էլի, էնկի չէ մտքումս ասում էի, Տէր Աստուած, թէ ինձ կընտրեն երեցփոխ հոգաբարձու, մի գառը մատաղ կա-

նեմ Հայոցակատու Սուրբ Սարգսին, —չէ որ ամենքի մուրազը նա է տալի:

Մարթա.—Հա գէթաղւայ: **Միխէիլ** ջան, մի գագէթինը կարդա է:

Միխէիլ.—Բաշ ուստա, էս սահաթիս: (Պատրաստում է կարդալու) Էտէնց, էսօր առաւօտեան գագէթչիկը եկաւ գուքանս ու մեր պրիկաշչիկը մի հատ առաւ աչքերին գէմ դրաւ կարդումա ու կարդում: Մէ բաշ տեղցը վեր թուաւ ու բղաւեց «խաղէին ջան, քու անումը գագէթում գրած առ Դան, ռանզս մանդս թուաւ, հազար ու մի վիս բաներ մտքովն անց կացաւ: Ո՞վա գիտում աշխարհք է, վիքը արի, հալբաթ Սերգոյի պօղլոդ վէք սիլլ բացւելա, ետն թէ չէ մտածեցի, հալբաթ էն գողցած շաբարը, որ փութը Յ մանէթով առայ, իմացել են ու հիմի գագէթումը զցել (ցածը) չես գիտում ասած է—գող սիրտը գող—(բարձոյ) ու չարացած բղաւեցի խեղճի վրայ, տօ ախմախ Իվանիչ, հօկօն Պետրովիչ, իմ անումս ինչու պլծի գագէթումը զցեն, գժւել ես, ինչ է: Նա գարձաւ թէ խագէին ջան, մի վախենայ, քեզ գովել են գովել: (Համըուրելով լրազիրը) Պահ քու գրողի ու փեշատողի հոգուն մեռնեմ: Աստւած էլ քո սիրտը ընենց ուրախացնի ոնց որ իմս ուրախացրիր: **Մարթա** ջան թող մի ընտրեմ, մեր սուրբերին էնպէս պատիւ տամ, որ իրենց օրում տեսած չինեն:

Մարթա.—Լաւ **Միխէիլ** ջան լաւ, դէն մի կարդա ես էլ գէնջանամ է: Վահ, սիրտս կրակ զցեցիր ու վառեցիր, դէն հանգցրու մեղքեմ:

Միխէիլ.—Բրաւօ, բրաւօ, էտ ինչ պօէտի հանդի ես խօսում: Բաս գու լաւ վարժուհի կըլինես հը: Զէ որ ինչքան պօէտներ կան դիմին էլ վարժապետներ են ու վարժուհիներ, հա, հա, հա, հա: (Ծիծաղում է) դէն լաւ ականջ արա կարդում: Եմ, (Համըուրում է ըրազիրը մի քանի անգամ) ու կըմշըմալով կարդում:

Սուրամ 13 դեկտեմբերի Ամսոյս 10-ին տեղիս ծխաւ կան դպրոցում նշանակւած էր ծխական ժողով, օրինական թիւ չը լինելու պատճառով ժողովը յետաձգւեց հետևեալ կիւրակիւ ժողովի նպատակն էր Սուրբ Գրիգոր Լուսաւորչի եկեղեցու համար երեցփոխ-հոգաբարձու ընտրել: Ժողովականների մէջ տրամադրութիւն կայ ընտրելու տեղիս վաճառական պարոն Միխէլի Կուպեցեանին: (Միխէլը վերջացնելով հպարտ նայում է Մարթային, Մարթան ես մի քանի վայրկեան նոյն դիրքն է բռնում, ապա ընկնում է Միխէլի զիրկը):

Մարթա.—Վահ մեռնեմ քո ջանին ուրախութիւնից ծնկներս թուլացան, դրուստ որ մեծ աչքալուսա: Արա Միխէլի ջան, էտուր համար մի վէշիր պըտի սարքեմ, մի վէշիր, որ սաղ Սուրամում տեսած չը լինեն: Վէշերին կուգան պոդրուգէքս ու մէկ մէկ կը չնորհաւորեն, ես էլ ոնց որ երեցփոխի կնիկ...

Միխէլ.—(Խօսքը կտրելով) Երեցփոխ-հոգաբարձուի կնիկ, Հոգաբարձու, մի մառանայ է:

Մարթա.—Հա, ոնց որ երեցփոխ-համ էլ հոգաբարձուի կնիկ, կը փքւեմ կռեսլօին (փքւած նստում է դիւանին) ու հպարտ հպարտ կասեմ, շնորհակալ եմ գէթաղւէք:

Միխէլ.—Դու քո պոդրուգէքն ես ասում, բա չես ասի որ հիմի էս գաղէթը ամեն աշխարհ գնում ա, էլ եւրոպա ու Ամերիկա, էլ Հընդըաստան ու Արաբստան ու մինչև անգամ Եապոնիա: Հըմի մտիկ Եապոնի թագաւորը ոնց կը գարմանայ որ Միխէլ Կուպեցովը (հըտարտ նստում է դիւանին Մարթայի դիմաց) խելօքմարդ ա ու ինչքան ախ ու վախ կանի որ իրա մինիստրը չեմ: Աւտաս ջգըուցը ինչքան մինիստր ունի դիվին թակի ու դուրս անի:

Մարթա.—Հըմի դու մտիկ արա Մանթաշկի աղջկերքն ու Ափրիկովի կնիկը ոնց կուզենան ինձ հետ

ծանօթանալ, ես էլ խոմ պիտես էլի, ինձ ծանը կը պահեմ: Աւտաս, միշտ տելեգրամներով խօսեն հետա, հասարակ մարդու կնիկ խոմ չեմ:

Միխէլ.—Բա էս չես ասում (շտապ շտապ) հըմի հայոց ազգի կաթողիկոսը ոնց կօրհնի ինձ, որդի նստի, զիփի իմ մտսին կը խօսի, կասի օրհնեալ լիցի Միխէլ Կուպեցովը, խելօք մարդ ա ու մի կոնդակ կուղարկի ոսկէ տառերով գրած:

Մարթա.—Բա էս չես ասում (աւելի շտապ) հըմի շկօլի վարժուհիները ոնց գլուխ կը տան ինձ:

Միխէլ.—Բաս էս չես ասում, հիմի վարժապետները ինձ տեսնելիս շլապկէթը ոնց մինչկի երկինք կը բարձրացնեն, ես էլ հպարտ հպարտ կասեմ «բարե» (տաքացած) իսկի կարան մի քիչ բարձր խօսեն, աւտաս զիփին մէտի 24 սահաթում շկօլեմէն դուրս անեմ:

Մարթա.—Վույ բա, էս ոնց կըլի, չէ որ ուսում առած մարդիկ են, ամօթ չի:

Միխէլ.—Ոնց թէ ամօթ չի, նրանց անուններն էլ խոմ իմիս նման գաղէթներումն չէ գրւած, նրանց էլ խոմ մինչկի թագաւորները ու կաթողիկոսները չեն ճանաչում: Ինձ հանաք մարդ չը գիտենան հա:

Մարթա.—Փիքը եմ անում, քանի քանի աղջկերանց մէրեր պիտի ինձ աղաչեն որ քու առջև բարեխօս լինեմ, ինչ է նրանց շկօլեմէն դուրս չանես:

Միխէլ.—Դուն էլ միթում բան ասիր, հըմի մտիկ աշխարհիս քանի ծէրից, քանի քանի վարժապետներից խնդիրներ կըգայ որ ինչա լնդունեմ իմ շկօլումը, աբա էլ մամիդի տղայ, ձալօի աղջիկ, զիգէդի փեսա, էլ ախպէր տղայ, ես էլ զիփի նրանցից կընդունեմ, թող նրանք էլ ապրեն, բա խօ խալխին չեմ ընդունի: Թէ ոնց առևտուրս կը չաղանայ, դրա մասին խօսելն էլ աւելորդա:

Մարթա.—Միխէլ ջան, բա որ ասում են հայոց շկօլէն փող չունի, պըտի հոգաբարձուները տան:

Միխել. — Գիշել ես աղջիք չեմ ու ցաւ կըտամ փողի մագիար, հալա 5 թուման որ տւել եմ ու վէքսին էլ ձեռքումսա, էն կառնեմ: Ինչ ա որ հարուստ եմ իրենց համար եմ աշխատել, պահ, պահ, պահ, էրնեկ Միխելի տիթոջը, էշը դադի ձին ուտի:

Մարթա. — Հեմ գիտում էտ քու բաննա համա մուղայթ կաց չը խարեւս:

Միխել. — Դուն արխէին կաց Մարթա ջան, ես նրանցից չը պոկեմ թէ չէ նրանք ինձանից չեն պոկի: Դէս Մարթա ջան, դուն գնա կօֆէի պատրաստութիւնը տես, ես էլ էսա գնալու եմ ժամի հայաթը չէ որ էսօր կիւրակի է ընտրութեան օր է, խալիքինձ է սպասում:

Մարթա. — Հա Միխել ջան լաւ ես ասում գնամ (դուրս է զնում երգելով), Ոլոր մոլոր կուրն է գալիս կովկաս սարեմէն, իմ Միխակի ձէնն է գալիս գագէթներեմէն:

Միխել. — Պահ քու պօէտ ջանին մեռնեմ, ինչ սազացնումա է,

Տ Ե Ս Ի Լ 2

ՄԻԽԱԿԻ ՄԵՆԱԿ

Դէս մի տեսէք ինչ սիրուն տառերով ա գրած է (կարդում է վերջին տողերը) Ժողովականների մէջ տրամադրութիւն կայ ընտրելու տեղիս վաճառական պարոն Միխել կուպեցեանին: Բաս պակաս մարդ են գիտում Միխել կուպեցովին, բանկի չեն ասես, կուպեցովն է. վիրօնի չեն ասես-Միհէիլ կուպեցովն է. կլուրի ստարչինա ասես, Միխել կուպեցովն է էստի էլ որ Միխել կուպեցովին չընտրեն բօչկաչուն ու բաղալին խոմ չեն ընտրելու: Մարդս մարդ եմ պատւական, պեռւի գիլդի կուպեց, սաղ քաղաքին գլուխս էնէնց եմ շանց տւել որ դիկը կարծում են թէ մեծ բարեգործ

եմ, համա քոռ գոօշի երես շանց չեմ տւել: Էն օրն էլ դուքնումս տէրտէրին հաւատացը թէ մեռնելուցս յետոյ ամբողջ կարողութիւնս շկօլին պէտքէ կտակեմ: մաշ, թող պաս պահի, պասին էլ իշտային սոխ ու սըլու տոր ջարդի (նայում է ժամացրյացին) օհօ, հէնց գնալու վախտն է, թէ շկօլի կասսէն ձեռքս կը զցեն ոնց կը սաղացնեմ իմ կորած 5 թումանը: Հէյ Մուրազատու Սուրբ Սարգսի (զնում է ղիմացի ղոնով, ներս է մըտնում Պետրոսը):

Տ Ե Ս Ի Լ 3

ՊԵՏՈՂՍ ՄԵՆԱԿ

(Սենեակը՝ կարգի պերելով) Եռակէս Վլաբան էք տեսել, ով որ խելքի է գալիս, իմ աղան ու աղջիկ պարոնը կամաց կամաց գըժուում են: Զեմ գիտում ինչ է պատահել սրանց: Աղէս մի ինչ որ գագէթա հանում ջիթից, պաչում պաչում ու նորից ջիթը զնում) աջղիկ պարոնն էլ հոգեղարձ ասելով օթախից օթախ է ման գալիս ու երգումա հա երգում: Սրանից մի քիչ առաջ ուղում էի օթախը կարգի բերել ու մինչև ներս մտնելու բանալու ծակից մտիկ արի, Տէր Աստոծ, ինչ տեսնեմ, աղէս ու աղջիկ պարոնս էնակէս էին փրւել ու ուռել ինդաւուրների պէս ազես նոր էին շւացըել Թրուստն ասած վախեցայ ներս մտնեմ: Զէ էստունք անպատճառ խաչիցնա, էտ ախմախները որ խելք ունենան մի գառը մատաղ կանեն Ամաղէրին եան Շաւնաբաթին, չարքը կը կորչի և իրենք էլ առաջւայ պէս ջան սաղ կը լինեն, թէ չէ հիմի որ մօտենում են դրումտն պատի վախենում եմ:

ՏԵՍՆԱԿ ԵՒ ՄԱՐԹԱ

ՆՈՅՆԻՔ ԵՒ ՄԱՐԹԱ

Մարթա.—Այ տղա, էստեղ ի՞նչ ես շինում:

Գետրոս.—Աղջիկ պարոն..օթաղն եմ կարգի բերում: (Վախից կամաց կամաց հեռանում Մարթայից: Կողմը) Տեսանք ինքն ուղարկեց հիմի էլ ինքն է նեղանում:

Մարթա.—Տօ, քեզ ով ասաց որ օթաղը կարգի բերես, էստեղ կօֆէի համար կրակ չաղացնող չկայ դու կի էստի բօլթա ես տալի:

Գետրոս.—Աղջիկ պարոն ախար դու ասացիր է: **Մարթա.**—Ոնց թէ ես ասացի, (բարկացած) ոնց ես համարձակում հոգաբարձուի վիճան շառ գցել:

Գետրոս.—Ի՞նչ հոգեղարձ, ի՞նչ կնիկ, չեմ հասկանում:

Մարթա.—Ցիմար, հոգեղարձ կի չէ, հոգեղարձու համ էլ երիցփոխ, հասկանում ես երիցփոխ:

Գետրոս.—Հոգաղարձը հասկացայ աղջիկ պարոն, համա երեցփոխը խելքում չի մտնում:

Մարթա.—(բարկացած) Դուրս կորիր լիրը անպիտան, հոգեղարձն էլ ես ու մէկն էլ աւել. չի ամաչում ինչեր է դուրս տալի:

Գետրոս.—Ել կորչեմ աղջիկ պարոն կը կորչեմ, ես հոգեղարձների հետ գործ չունիմ: (բարկացած դուրս է գնում):

ՏԵՍՆԱԿ ԵՒ ՄԱՐԹԱ

ՄԱՐԹԱՆ ՄԵԽԱԿ

Լաւ է մարդ մի էշ ունենայ եան թէ էմթաւուը ծառայ, Աստծոյ պատիժ է անիծւածը ի՞նչ է: Ի՞նչքան էլ ուրախ լինես, ի՞նչքան էլ քէֆդ տեղը լինի, էդ բէդասլին տեսնես թէ չէ արիւրնդ պէտք է պղտորես: Ի՞ն

թող բարով խէրով Միխակա, ընտրւի, դրանսէ էստիան դուրս անելը դժւար քան չի: Ապա էլի ոազէթներում կը գրեն, Միխէիլ կուպեցովը աւժէ երեցփոխ հոգաբարձու ընտրւեց, համա ափսոս որ չեն գրի թէ Միխակի: Կնկա անունն էլ Մարթա է, բաղալ Դարչօի աղջիկը: Իքնէքա էտ էլ կը գրեն ովա գիտում: (ղըսից լըստում են ծայններ, Մարթան մօտենում է պատուհանին) Քա էս ի՞նչ ձէններ է գալիս (ղըսից լատում է, — շնորհա տրում ենք, պարոն կուպեցով շնորհաւորում ենք,) Վույ քա ասում են շնորհաւորում ենք. հալբաթ ընտրել են: (ծայնները շարունակում են) Քա պարոն կուպեցով են ասում, գանա պարոն էլ դարձաւ. (Մարթան պատուհանից ձայն է տալիս) Շնորհաւորում եմ պարոն կուպեցով, շնորհաւորում եմ գենացւա, շնորհաւորում եմ նէթաղւա: (ղէպի դուռն է վազուա: ներս է մտնում Միխէիլը ծեռպին մի քանի ցուցակներ, հպարտ ձեռք տալի Մարթաին:)

ՏԵՍՆԱԿ ԵՒ ՄԱՐԹԱ

ՄԱՐԹԱ ԵՒ ՄԻԽԱԿԻ

Միխէիլ. Հայոց ժամի ու շկօլի գանձապահ երեցփոխ հոգաբարձու Միխէիլ կուպեցով:

Մարթա.—Հայոց ժամի ու շկօլի գանձապահ երեցփոխ հոգաբարձուի կնիկ Մարթա Դարչովսա:

Թիխէիլ.—Տեսար Մարթա ջան, ոնց խալիսը մէ բերան ինձ ընտրեց: Էնէնց էին բղաւում Մէխէիլ կուպեցով: որ ականջներս ծակեցին:

Թարթա.—Մաշ պակաս մարդ ա Միխէիլ կուպեցովը: Աբա Միխէիլ ջան մատաղը երբ ենք անուն:

Միխէիլ.—Լաւ, կանենք, մուլափ գըեմ որ կուպեցովին տւի 5 թուման պարտը: (զրում է կուպեցովին 5 թուման.)

Մարթա.—Ես էլ էքուց կերթամ կանդիտէրսկի
ինչ որ պէտք է զակագ կըտամ վէչէրիս համար:

Միխէիլ.—Ետա էլի, փողերը քուշումն ես գտել:
Էսէնց ես շտապում կասես հարսանիքը սարումն ա մնա-
ցել, տնաշէն ինչ ես շտապում: (Դուռը ծեծում են) **Տես**
էտ ովա. (*Մարթան նայում է պատուհանից*)

Մարթա.—**Միխէիլ** ջան, մի ինչոր շեապով մարդաւ
Միխէիլ.—Շլեապով:

Մարթա.—Հա:

Միխէիլ.—Լաւ, ներս կանչիր, դուն էլ դուրս
գնա էստիէմէն: (*Մարթան դուրս է գնում, մտնում է
ուսուցիչը:*)

Տ Ե Ս Ի Լ 7

ՄԻԽԵԻԼ ԵՒ ՈՒՍՈՒՅԻՆ

Ուսուցիչ.—Բարև Զեղ պարոն Կուպեցեան:

Միխէիլ.—Աստծու բարին, պարոն վարժապետ,
բարով եկաք, համեցէք նստեցէք: (*Առաջարկում է նըս-
տել դիւանին, ինքն էլ հպարտ նստամ է նրա դիմացը:*)

Ուսուցիչ.—Պարոն Կուպեցեան, շնորհաւորում եմ
Զեր նոր հասարակական պաշտօնը, և լիայոյս ենք որ
այսուհետև դպրոցական գործի նիւթական մասը այն-
պիսի հողի վրայ կը դնէք որ Զեղ վատահութեան քվէ
տւող հասարակութիւնը գոհ կը մնայ և նրանց յոյսերը
ի դերև չեն անցնի:

Միխէիլ.—(*Կողմը*) Բան չը հասկացայ (նրան) **Մաշ**
պարոն վարժապետ, հիմի ամեն բան լաւ կը լինի:

Ուսուցիչ.—Շատ ուրախ ենք:

Միխէիլ.—Իհարկէ ուրախ կը լինէք:

Ուսուցիչ.—Պարոն Կուպեցեան, ես եկել եմ մի
կարևոր գործի համար:

Միխէիլ.—Հրամայեցէք:

Ուսուցիչ.—Ահա չորրորդ ամիսն է ինչ ուսումը
սկսւել է բայց դեռ դպրոցական ցուցակներ չունենք.
քանիցս անգամ դիմեցի հոգաբարձուներին, բայց ոչ ոք
չըմտածեց գնելու մասին:

Միխէիլ.—Ցուցակը որն ա, շկօլի դաւթարներ:

Ուսուցիչ.—Այո:

Միխէիլ.—Լաւ. (փրւելով) **Ուրիշ:**

Ուսուցիչ.—Աշխարհագրութիւնից արդէն սկսել
ենք Ասիան, բայց քարտէզ չունենք:

Միխէիլ.—Ի՞նչու, էն եքա պարտէզը ինչա եղել:

Ուսուցիչ.—Պարտէզ չէ պարոն Կուպեցեան քար-
տէզ:

Միխէիլ.—Ինչ որ է մախլաս, ուրիշ:

Ուսուցիչ.—Ահա երկրորդ օրն է որ դպրոցում
փայտ չկայ վառելու, աշակերտները ցրախց ուղղակի
սառչում են, շատերը նոյնիսկ դպրոց չեն գալիս:

Միխէիլ.—Պահ, քու առնը շինւի վարժապետ,
անտառը շատ հեռուէ ինչ է. չես կարող մի օր երե-
խէրին վերցնես գնաս մանր փէտեր հաւաքես, շատ
դժւար բան է ինչ է:

Ուսուցիչ.—Ինչ էք ասում պարոն Կուպեցեան,
միթէ կարելի է դասերը թողնել երեխաներին աշ-
խատեցնել, վերջապէս նրանք ինչ պարտական են:

Միխէիլ.—Ի՞նչու չէ, սազ չի գայ թէ ինչ է:
Մախլաս ուրիշ էլ ինչ է պակաս:

Ուսուցիչ.—Ցետոյ պարոն Կուպեցեան... երկուսից
երեք ամիսէ ուսուցչական խումբը ըոճիկ չէ ստացել...
ինդրեմ...:

Միխէիլ.—Շատ լաւ ես ասում, պարոն վարժա-
պետ, երեսում է ամեն բանում աչքաբաց ես, ըսկի բան
չես մոռացել, դիմ ասում ես հա ասում, դիմ էլ խե-
ռք բաներ են, համա որ փող չկայ:

Ուսուցիչ.—(*զարմացած*) Ի՞նչպէս թէ փող չկայ,

Հէ որ այսօր ժողովին պարուն Սարգիսը վճարեց իր համար 50 ըստբյին:

Միմէկիլ.—Դրուստ է տւեց, համա ինչ արած ոք մէկից առնում միւսին ես տափ:

Աւտոգիշ. — Ի՞նչպէս:

Միմէկիլ.—էնպէս որ պարտապանից առայ պարտատիրոջ տւի:

Աւսուցիչ. — Զեմ հասկանում:

5 Միմէկիլ.—Այ, էս մի տարի է շկօլը ինձ պարտ էր
թուման ու եսօր տեղափակ Միմէկի Կուտառումի տառագու

Աւագութեան կամաց պարագաները՝
Խառնութիւն. — Պարոն Կուպեցեան, Դուք կարող էիք
ձեր պարագաները լինու էլ վերջնել:

Միսէլլ. — Ախատէր, եդ յետոյին վերջ պիտի լինէր
թէ չէ, իմ հաշուով էսօը վերջն էր. ու սրանից յետոյ
ամեն ինչ խաղաղ իցէ ասէ երեցփոխ:

Ուսուցիչ.—Պարոն Կուպեցեան, ես զարմանում եմ Ձեր վարմունքի վրայ, այստեղ դպրոցը տառապում է աղքատութեան մեջ, շնորհիւ մի շաբք դպացացական անհրաժեշտ պիտոյքների պակասութեան՝ յառաջադիմութիւնը կաղում է, երախաները ցրտից սառչում են, իսկ դուք առանց խղճահարւելու Ձեր պարտքն էք վերցնում:

Միխելի. — Վարժապետ, ես էլ էի տառապում նա-
լօժների տակ, ինձ էլ փողը շատ էր հարկաւոր, մենք
վաճառական մարդիկ ենք:

Ուսուցիչ. — (Զայրացած) Այո, իսկը Զեր վաճառականութեան պատրաստ էք խորտակելու այն բոլոր հասարակական ու կուլտուրական հիմնարկութիւնները, որոնք ձեզնից հէսց թէկուգ մազաշափ կախում ունեն, և դուք ժողովուրդի աչքին թող փչելով վայելում էք հասարակական գործիչի պատիւր:

Միխել. — (բարկացած) Պարոն վարժապետ, դիւնես թէ ում նետ գործ ունես:

Ուսուցիչ — Մի վաճառականի, որը միայն գծուձնաշխատ է առաջնորդում ունակության անելով ամեն մի սրբութիւն...

Միմէկլը (Խօսքը կտրելով) շատ զահլա մի տաճի
ու լեզուիդ մի քիչ աղ արա ասում եմ թէ չէ...

Աւսուղիչ. — Թէ չէ:

Միակը. — Թէ չէ քեզ դուքս կը շպրտեմ շկօլեմէն:

Ուսուցիչ. — Դուքս կը վանդես հա, հա, հա, (ծի. ժաղում է) Դա է ձեր միակ զէնքը մեր դէմ կռւելու, բայց նա շատ անգօր է, մենք նրանից չենք վախենում հասարակական շահերը պաշտպանելու համար։ Հասարակութեանը պէտք են հասարակական անկեղծ գործիչներ և ոչ թէ ձեղ պէս փթած առաջնորդութեանը (գնում)։

1.001
1053

(Ապշած) ի՞նչ ասեց, փթած առաջնորդներ, գանա
առաջնորդ էլ դարձանք, էն էլ փթած։ Վայ իմ
պատւական գլուխ որ ընկար էտպէմների ձեռքը, ափ-
սս կուպեցով ափսո՞ս, ախմախը էնքան քուացաւ, չը-
տեսաւ որ գլխիս ոչ պոպող ունեմ ոչ էլ դօշիս խաչ,
բա էդ դուռակը էնքան չի գիտում որ առաջնորդը ողու-
շաղ չի ունենայ։ Վայ էս վարժապետներին թուզթ-
տուղի տունը քանդիի։ Ախար իրանք ինչ են գիտում
որ երեխէքին էլ ինչ սովորացնեն։ Ափսոս երեխէք որ
դրանց ճանկն էք ընկել, համա չէ, ես ձեզ շուտ կազա-
տեմ էդպիսի ախմախների ձեռքից, (դուռը ծնծում են)
օհօ սա էլ նրա հատն ու կտորից կը լինի (զրսից կան-
չում են — Պարոն կուպեցեան, կտորելի է ներս գալ)
Վահ, մէկի ձեռքից պըծանք միւսի ձեռքն ենք ընկնում
(զրսից — Պարոն կուպեցեան կարևի է ներս գալ) Ո՞նց

ՀԵ, ո՞նց չէ. քու պապի տունն է (ծայնը թուելով) և նմանցնելով) կարելի է տուն գալ. (դէպի դուռը) համեմ ցէք պարոն վարժուհի, համեցէք, (ու ինքն իսկոյն հպարտ նստամ է զիւանին, ներսէ մտնում վարժուհին):

S E H L 9

ՄԻԹԱԿԱ ՆԻ ՎԱՐԺՈՒՀԻ

Վարժուհի. — Բարե Զեղ պարոն կուպեցեան:

Միթէիլ. — Բարով ձեզ, համեցէք, նստեցէք:

Վարժուհի. — Շնորհակալթիւն: պարուացեան...

ահա երրորդ ամիսն է բոճիկ չեմ ստացել, խնդրեմ...

Միթէիլ. — (Խոօքը կտրելով) Դրուստ էք ասում պարոն վարժուհի, շատ քէսատութիւն է: Ահա ապրանքս եկել ա, վրէն 15 թուման նալօժ է դրւած, էնքան փող չկայ որ ազատեմ, էն էսպիսի քէսատութիւն իսկի չէ եղած:

Վարժուհի. — Բայց դա ինչ կապ ունի իմ բոճիկի հետ. կարծեմ որ ես չեմ եկել զրուցելու Զեղ հետ Զեր առևտրական գործերից. ես շատ պարզ եմ խօսում, որ երրորդ ամիսն է փող չեմ ստացել և յոյսով եմ որ այն քան բարի կը լինէք կը վճարէք գոնէ մի ամսականը:

Միթէիլ. — Դրուստ էք ասում պարոն վարժուհի, ես էլ էն եմ ասում, որ ինչպէս իմ գրպան է դատարկ, էնպէս էլ շկոլի կասսէն: Զես հաւատայ, էս սահաթիս տասը շահի չկայ որ շ փութ փէտ առնենք շկոլի համար:

Վարժուհի. — Վերջապէս բաւական է, պարոն կու պեցեան, որքան մեզ խտրեցիք, բաւական է ինչքան որ սպասեցինք, այլևս ոյժ չկայ սպասելու հասկանում էք, ոյժ չկայ: Գիտցէք որ իմ ամբողջ կեանքը, բօճիկիս վրայ է հիմնած:

Միթէիլ. — Պարոն վարժուհի, էնպէս ես խօսում ասես քո հօր ճորտը լինեմ, ինչ ես շատ պըռապորտ ացնում ու մըռդմըռտացնում, քեզ ասում եմ փող չկայ:

հասկացի էլի, հայերէն եմ խօսում ջընուդերէն խօ չեմ խօսում:

Վարժուհի. — Իսկ ես ասում եմ դա իմ գործը չէ, հոգաբարձու գանձապահ էք պարտաւոր էք: Վճարելու:

Միթէիլ. — Քու պապի գանձից թէ քու մամի կասմից (կողմը) վահ, իսկի էսէնց հուշաթ աղջիկ տեսել էք: (Նրան): Պարոն վարժուհի, որ փողի համար էնէնց բողզիս ես չոքել, մէկն ասի փողը քեզ ընչիդա պէտք, եան թէ չէ աղջկանը, ինչ սազ գալու բան է որ տղամարդու պէս քուչա քուչա ընկնի, շկոլ գնայ, ինչա մի երկու շահի պըտի գաղի: Աղջիկ ես տանդ նստի, կար արա, լւացք արա, հաց թխի, տուն ու տեղդ հաւաքի աղջկայ շնորհք բանացրու, հօրդ ու մօրդ ուրախացրու: Թէ չէ ամսէնը 25 մանէթ փող ես առնում ու էնէնց խարջում կասես քուչումն ես գտել, իսկի յօբու ու սիսոփի մօտով անց չես կենայ, համա կատլետեմէն ու բիշտեկսեմէն ձեռ չես վեկանի, մախնց մի քիչ դարբաթ արա:

Վարժուհի. — Միթէ, հա, հա, հա, (ղառը ծիծաղում է): Պարոն կուպեցեան, թէ որքան մեծ է կանանց ղերը մանկավարժական ասպարէզում, դա Զեղ բացատրելը միանգամայն աւելորդ եմ համարդում և նոյն իսկ ջուր ծեծել, բայց ասացէք խնդրեմ, Զեղ ով թոյլ տւեց կարգադրութիւններ անելու իմ փողի վրայ, պարոն, դա Զեր իրաւունքներից շատ վեր է:

Միթէիլ. — Պարոն Վարժուհի ես քեզ խորհուրդ ես տալի, չես ուզում դուն գիտես:

Վարժուհի. — շնորհակալ եմ Զեր բարի խորհուրդի համար, խնդրեմ նեղութիւն միք կրի:

Միթէիլ. — Են, պարոն վարժուհի, կարճ կտրենք հիմի էս սահաթիս փող չկայ երբ կը լինի կտանք:

Վարժուհի. — Պարոն կուպեցեան, փող կայ, միայն պէտք հաւաքել:

Միթէիլ. — Աբա, որտեղ ա:

Վարժուհի. — Մխական տուրքը, միայն հարկաւոր է աշխատել, ժողովուրդը չի խնայում։
Միխէիլ. — Տուրքը չէ քուրքը չես ուզում ինչ է, ես էստեղ քուհօր մշակն եմ որ քուչա քուչա թրէվ գամ, փող հաւաքեմ ինչա վարժապետները վիսդ են ուզում։

Վարժուհի. — Այդ դէպըում չը համաձայնէիք այդ ժանր պաշտօնը ստանձնելու։

Միխէիլ. — Տօ, դուն իմ գլխի նաշանիկն ես դառել թէ գուրերնատօրը, ինչ ես շատ զահլա տանում, գնա փող հաւաքի, ինչի էտ ապաշտօնը վերցըիր, ովա լսել որ էտքան համարձակ խօսեն հոգաբարձուի հետ։

Վարժուհի. — (Հեզնօրէն) Հոգաբարձու, երանի թէ ձեզէսները իսկի ծնւած էլ չը լինէին հայկական թրշւառ ասպարէզում։ Դուք ժողովրդի շարեկաներ, դովուրդը ձեզ հրաւիրում է իր խոր վէրբերին դեղ դարման անելու, իսկ դուք շահագործելով նրանց հաւատը — վէրքը աւելի էք խորացնում։ Բայց մենք թոյլ չենք տայ որ հասարակական սրբազն հիմնարկութիւնները ձեր ձեռքին խաղալիք շինէք։ Հանարակութեան հարկաւոր են կենդանի մարդիկ, նա մեռելներին գերեզմանատուն է ճամփում, և մենք կը պատռենք ձեր դիմակը մենք մամուլին կը դիմենք։ (Դուրս է զնում)։

Տեսիլ 10

ՄԻԽԵԻԼ ՄԵՇՍԱԿ

(Ժիծաղում է)։ Հա, հա, հա, րիս մամուլի⁴) րաս ամօրս, սարսաղը գնաց եկաւ մամուլիս վապաւ, հա, հա, ախմախը էնքան հայերէն չի գիտում որ կայք ու կարողութիւն պաի ու մամուլի է ասում. վայ դրողը

*) Մամուլի վրացերէն կը նշանակէ անշարժ կայք, կալածք։

տանի ձեզ պէս վարժուհիներին։ (Հնոնդիսականներին) Տօ կրակն ընկանք ինչ է, գանա երեցփոխ-հոգաբարձու լինելը էսքան խաթա բան է եղած ախպէր, պարտք չունեցած տեղը գլխիս պարտք դրեցի։ Ասում ես փող չկայ, Աստոծ, երկինք, գետինք, ծով, ցամաք, չկայ ու չկայ, համա բան չունես, ում հետ ես խօսում, ում պըտի հասկացնես, վաճառական խոմ չեն որ փողի գորութիւնը իմանան։ (ըարկացած) Տօ, ախմախներ, մեղք էք տեսել որ ձանձի պէս վրէս էք թափւում։ Մէկն ասումա փէտ չկայ, էն մէկէլը թէ ջամագիրս չեմ ստացել։ Զըհանդամը թէ չես ստացել, ես կի իմ ծ թումանը, աղացըրի հիմի ինչ կուզէք արէք։ Էլախտէլ մէկը բռնելա, գիտէք ինչա ասում, էհ, ողորմութեանդ մեռնեմ Աստօծ, ինչքան գժեր ես ատեղծել էս Քո օրհնւած աշխարհնում, ասում է պարոն Կուպեցով, հիմի ձեր պարտքն է տնից տուն մանգալ, դուքանից դուքան ու փող հաւաքէք շկօլի համարու էնէ, ինչա ինձ աղքատութիւն պըտի սովորեցնեն իրենց շկօլի համար, մաշ մաշ, աղփումն եմ գտել իմ պատւական գլուխը չէ չէ, նէտէնց բան չիլի չէ, թէկուզ վիփդ էլ սովից կոտորւէք թէ կուզ սադ շկօլը տակն ու վրայ ըլի Միխէիլ Կուպեցովը էտէնց ախմախ բան չի անի, չէ (վարագոյօք կամաց կամաց իշնում է)։

ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ

ՊԵՏՐՈՍ ԿՈՒՊԵՑՈՎ ՆՈՅԵ ՍԵՆԵՆԿԵ

ՊԵՏՐՈՍ ԿՈՒՊԵՑՈՎ ՆՈՅԵ ՍԵՆԵՆԿԵ
ՄԻԽԵԻԼ ԵՒ ԱՐԵՍԱԿ ԱՐԵՍԱԿ ԱՐԵՍԱԿ
(Ներս են մտնում խօսելով) ու առ յու Միխէիլ։ Դէս, խօ տեսար Արշակ, ատեսար էսու ախմախը ինչեր էր էր դուքս տալիս, բա էտպէս վարժա-

պետին հախը չի կնծին տալով դուրս անես:
Արշակ.—Հախն ա ախպէր հախն ա,
Միխէիլ.—Չէ, թէ դա էստի մնայ, երեխէքը Աստոծն
էլ կը մոռանան Քրիստոսն էլ հետը: Չի ամաչում, ասում
է թէ անձրեց Աստուծ չի տալի, մէկն ասի աօ տուտուց
բար դուն ես տալի: Ասում է պառը վեր է բարձրա-
նում, էնդի սառչում ու նորից ջուր դառնում ու ցած
թափուում. մէկ ուզեցայ էն երեխանց առաջ մի թարս
թրիսկացնեմ. մէկ էլ փիքը արի որ ամօթ ա:

Արշակ.—Բաս էն մէկէլը, մէկէլ վարժապեաը,
Տէր Աստուծ ինչեր էր գուրս տալիս, ասում էր արե-
գակը կանգնած է ու մեր աշխարհը նրա չորս կողմը
բզրգալի հանդի պտուտ է գալի:

Միխէիլ.—(վերայ ընթելով) Հալբաթ շոլթին* էլ
ինքն է խփում: (ծհծաղում են)

Արշակ.—Ախպէր, առաւօտ վաղ վեր ենք կե-
նում, պարզ աչքով տեսնում ոնց արեգակը բուրթու
մէս խաղալով, խաղալով սարի յետելից դուս է գալի,
գալիս մեր գլխի վերել կանգնում, մի լաւ թամաշայա
անում ու նորից խաղալով խաղալով էն մէկէլ սարի
յետեր թախ կենում, բաս էդ մարդը իսկի մի անգամ
չի նայել որ ախմախ ախմախ դուրս է տալի:

Միխէիլ.—Խօ տեսար զբանց ախմախութիւնը, խօ
տեսար զբանց ցանցառութիւնը:

Արշակ.—Տեսայ ախպէր տեսայ:

Միխէիլ.—Էտ անաստոծները հալա չեն էլ ամա-
չում, երեկ չէ առաջի օրը բողզիս չոքել էին թէ փող
տու, ջամագիրներս չենք ստացել, բաս էտպէսներին
փող տալը մեղք չի, հը Արշակ, ինչ կասես:

Արշակ.—Տօ էտպէսներին փողի տեղ մի բուըը
հող պըտի տաս հող: Ափսոս չի փողը, սաղ շկօլը երե-
խանցով հետը խարաբ արին,

(*) Մարտակ

Միխէիլ.—Մի տեսնէիր էստի ինչ զալմաղալ էին
սարքել, ինչ ուշունցներ հոգաբարձուներիս:

Արշակ.—Ի՞նչ ես ասում, ինձ էլ ուշունց տւին:

Միխէիլ.—Բաս թողին:

Արշակ.—Էտ ոնց համարձակւեցին:

Միխէիլ.—Պահ քո տունը շինւի, թէ որ ինձպէս
աղա մարդուն, որ անումս սաղ աշխարհի գաղէթ-
ներումը գրածա, չը խնայեցին, քեզ կը խնաէին:

Արշակ.—Ի՞նչ ես ասում, հաստատ:

Միխէիլ.—Հաստատ:

Արշակ.—Բաս էս գդակը էլ ինչու ենք ծածկում,
որ մեր վարժապետները մեզ պլատի ուշունց տան, չէ
ես դաբուլ չեմ անի չէ: Դրանց պէտք է էստիան դուրս
զպրաել դուրս: Ա՛խ Յարութիւն, քեզ հոգաբարձու ըն-
տրողի լեզուն պապանձւի, էնքան երես տւեց էտ վար-
ժապետներին, որ էսօր հալա մեզ ուշունց էլ են տալի.
հազար անգամ ասում էի թէ այ մարդ դրանց հետ շատ
մի մանգայ, մի դոստանայ. համա բան չունես: Ասում
է ուսում առած մարդիկ են, խելօք են, վայ էտպէս
խելօքները թող իսկի ծնւած էլ չը լինէին:

Միխէիլ.—Մուլափ Արշակ ջան մուլափ, ես գրանց
գլխին էնէնց օին գամ, որ հոգիները դուրս գայ. թող
նրանք հանաք չանեն ինձ հետ համ, ինձ մինչկի թագա-
ւորներն են ճանաշում:

Արշակ.—Չէ, ես մի ձեռաց գնամ մեր պարոն
նախագահ Յարութիւնի մօտ, ասեմ մի թաթարեախնի
ժողով սարքի, տեսնենք դրանը ոնց են համարձակւում
մեզ ուշունց տալու:

Միխէիլ.—Այ բրաւօ Արշակ ջան, լաւ բան ես
փիքը արել, դէ, շտաղիը քանի բանկը չի գնացել, նա
իրիկնաղաճներին էլ է գնում:

Արշակ.—Գնամ զնամ (դուրս է գնում):

Տ Ե Ս Ի Լ 2

ՄԻԱՅԻՆ ՄԵՇԱՍ

ՓԹԱԾ առաջնորդ, հա վարժապետ, մամուլս ծախեմ հա պարոն վարժուհի, հիմի տեսնենք քու շետապի քորցները կը ծախուի թէ իմ մամուլը. հա հա հա (ծիծաղում է) Զեզ էն էնց դաս տամ, որ մինչև մեռնելը չը մոռանաք. Դուք փս արիւնս լաւ պղտորեցիք ես էլ ձերը պիտի պղտորեմ.

Տ Ե Ս Ի Լ 3

ՄԻԱՅԻՆ ԵՐ ՊԵՏՐՈՍ

ՊԵՏՐՈՍ.—Աղա,

ՄԻԽԵԼ.—Ի՞նչա,

ՊԵՏՐՈՍ.—Մի մարդ ձեզ ուզում է տեսնել,

ՄԻԽԵԼ.—Ո՞վա, վարժապետ խոմ չի,

ՊԵՏՐՈՍ.—Զեմ գիտում, ձեռքին ինչ որ թղթեք ունի:

ՄԻԽԵԼ.—Օհօ, վարժապետ կը լինի վարժապետ. Ասա տանը չի տանը. Զեմ գիտում ուր փախչեմ, որ սրանց ձեռքիցը պրծնեմ:

ՊԵՏՐՈՍ.—Ասեմ գաղէտչիկ պըտի ըլի աղա

ՄԻԽԵԼ.—Տօ ախմախ, էտէնց ասա էլի, լեզիս ճաքեց. ասա թող վեր գայ, գաղէթի համար դռներս միշտ բաց ա: (ՊԵՏՐՈՍը դուրս է գնում, լրազրավածոք դրսից կանցում է՝ Զակավազье, Կавказская рѣчъ, Тифлисскій Листокъ, Мшакъ, Ковкаси. Праберъ, Оризонъ, Сахалхъ Газеты, Телеграммы պարոն Կուպիսով գաղէթ չէր ուզի): Անց չէ ոնց չէ, բաս մարդ առանց գաղէթ կը դիմանայ, մի Հորիզոն տու. (ղոնից առնում է լրազրոը, փողը վնարում ու շտապ շտապ բաց է անում լրազրոը) արա ուժէ գրած կը լինեն, որ

Կուպիսովը հոգաբարձու եղեգփոխ ընտրւեց (համբուզում է լրազրոը) ուն քու մոքոնողի հոգուն մեռնեմ, էլի մարդարտի պէս շարած կը լինեն իմ պատւական անունը: Արա գտնենք: (Կարդում է կմկմալով): Մերցաւերից—էս ոչինչ, հալբաթ մէկի գլուխը ցաւում առ էստիումում իլլաջ գտնի, —Մամուլ, էսէլ ոչինչ, հալբաթ մէկը կոտրա ընկել ու հիմի իր մամուլը ծախել առ զում: Առվկանց բազու, Բաթումի (Միջիշ Մտքում կարդալուց յիտոյ) Զէ, ես էստի չեմ: Մարիզամիշ, Ախալքարք: Պետերբուրգ, ոն օհաօհ օն, սա մեծ քաղաք ա հա, էմջիածին, սա էլ նրանից պակաս չի, ինչքան որ սուրբեր ունինք դիվ էստի են մօտ եղած, դրուստա տարին մի կաթողիկոսի գլուխեն ուտում, համա ինչ արած, էլի մեր հայ ազգի սուրբերն են, պըտի եօլա տանենք: Մօսկավ, պահ ինչ լաւ գրանսա գաղէթը, մի նմուտումը տես քանի աշխարհի իմացալ:

(Կարդում է) Նամակ խմբագրութեան, (զարմացած) Վէ, գանա էստի էլ մէկ մէկու նամակ են գրում, էս լաւ բան սովորեցի, մաշ Մօսկով որ գնամ, էնդիան էս գաղէթին մի նամակ կը գրեմ իմ կանարէյկա Մարթաս (Կարդում է) Սուրամ, —(Վեր թռչելով) ահա գտայ գտայ մեր կորած Սուրամը, ջընուդների աշխարհը, (ամուր համբուզում է լրազրոը) գէն մի կարդանք, (Կարդում է կմկմալով) Սուրամ 19 դեկտեմբերի (ուրախ) ջան ջան, էլի շարել են մարդարիտները (Կարդում է) Յայտնում ենք մամուլի միջոցով Սուրամի նորընտիր երեցփոխ հոգաբարձու պ. ՄԻԽԵԼ Կուպիսովանին մեր խորին զըզւանքը իր կոպտութեան և անգործնէութեան համար, ցաւում ենք որ հայ հասարտկութիւնը ընտրեց մի այն պիսի անձնաւորորթեան որը երբէք արժանի չէր այդ բարձր կոչմանն, —Ուսուցչական խումբ (ՄԻԽԵԼ շւարած, ղողղոջուն ծայնով): Վայ մէ էս ինչ է գրած, իքնէրա ես սխա կադացի: (աշքեր սրբելով նորից կար-

դում է զիսին խըսինով) Վայ մէ վայ մէ, դորթա դորթ,
վայ մէ Աստւած էս ինչ եկաւ իմ գլխին, խայտառակ-
ւեցի պրծայ: (Թուղացած ընկնում է դիւսնին) Վայ մէ
Մարթա ջան աաղ աաղ մեռայ արի վրէս սուգ արա,
տես քու պատւական Միխէիլին ոնց մորթեցին էն ան-
տառածները, ոնց քերթեցին էն թօկից փախածները:
(Վեր կենալով) Էն էլ ում առաջ—Պետերբուրգի ու
էջմիածնի, Մոսկովի կողքին: Վայ գաղէթ մոգոնողի
գլուխը տրաբւի, մաջէն ջարդւի, աչքերը քոռանայ,
քուչա քուչա թրէվ գայ: Արշակ ժղով ժողով, (8սյց
տալով լրագիր) Մի տեսք ինչ սե սե տառեր են, ինչ
բայդուշ բայդուշ խօսքեր: Սյ թէ ինչ է եղել մամուլը,
(ըարկացած կոխորտում է լրագիրը): Քու գրողն էլ,
պէաք է էսպէս սաստկի (ներս է մտնում Մարթան տես-
նում է ինչպէս Միխէիլը կոխորտում է լրագիրը):

ՏԵՍԻԼ 4

ՄԻԽԵԻԼ ՆԻ ՄԱՐԹԱ

Մարթա.—Ինչա պատահել Միխէիլ ջան, քու ձէնը
մինչև կուխնենա գալի:

Միխէիլ.—Էլ պատահի Մարթա ջան, կորանք գնա-
ցինք:

Մարթա.—Քա մի ասա բանը ինչումն է:

Միխէիլ.—Էլ ընչում պըտի ըլի, ինձ ցեխը կո-
խեցին էտ անիծւ ած գաղէթումը:

Մարթա.—Քա էս գաղէթումը: (Վերցնում է լրա-
գիրը գիտնից):

Միխէիլ.—Հա, հա, Մարթա ջան էտ գաղէթումը:

Մարթա.—Սա ինչ գաղէթա:

Միխէիլ.—Հորիզոն ա ինչ զահրումարա:

Մարթա.—Քա մէկն ասի ինչ կորիզների յեակից
ես ընկնում որ էտպէսի բաներ գրեն: Ախ իմ վէչեր

վախ իմ վէչեր, հիմի ես ոնց երևամ իմ պօղրուգէրիս:
Միխէիլ.—Հիմի ես ոնց փողոց դուրս զամ, էս
գուակը ոնց ծածկեմ, ախ իմ պատւական գլուխ:

Մարթա.—Բէսաբա անում դրա գրողը, հօրս ցաւ-
նա տանում, մօրս դարդը (կատաղած կոխուառը է
լրագիրը) այ, այ, դէհ գնա:

Միխէիլ.—Ախ էտ վարժապետներից մէկն ու մէկը
թէ ձեռքս կընկնի հում հում կուտեմ:

ՏԵՍԻԼ 5

ԿՐԱՆԿԻ ԵՒ ՊՈՂՈՍ

Պօղոս.—Աղա,

Միխէիլ.—Զահրումարա:

Մարթա.—Հօրս ցաւնա:

Պօղոս.—Աղա, երեխէքս կոտորւեցին, երկու ամիս
է փող չեմ ստացել ախար ես էլ մեղք եմ է:

Միխէիլ.—Զընանդամը թէ կոտորւեցին:

Մարթա.—Ի՞նչու գու սաղ մնացիր:

Պօղոս.—Ախար, աղա, մեղքս ինչ է:

Միխէիլ.—(ըարկացած) Հալա էլի խօսում էք:

Մարթա.—(Վերցնելով լրագիր խփում է Պօղոսին)
Էս ինչ խայտառակութիւն է, չէք ամաչում:

Միխէիլ.—Էս ինչ մայմունութիւն է, գուրս կո-
րէք էստիան, ձեր ոտը էստի չըտեսնեմ, գուրս կորէք
մըրբեր, գուրս: (Մարթան ու Միխէիլը յարձակում են
Պօղոսի վրայ որ ծեծելով դուրս անում տանից):

Վ ա ր ա գ ո յ լ

Դ Ե Ր Ձ



1970 հ դրամագույքոր նիշ՝ նույնը բայ ուժ մեջ դրվել է նկ սկզբ
առ մ և աչ ձևորությունը պարփակ բայ ուժ մեջ դրվել է Ա
սկզբ առ մ և աչ ձևորությունը նույնը նույն բայ ուժ մեջ դրվել
է Աստիճան և այս ազգային պատճենի անդամների համար Ա

→ **WATER AS A CARRIER**

卷之三

卷之三

«Ազգային գրադարան»



NL0322984

22216